



“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Ժ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՅԻՍ 1, 1881

ԹԻՒ 5

ԲՈՒՄԻՈՑ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ  
ԿԱՅՄԸ  
ՆԻ ԱՆՈՐ ՅԱԶՈՐԴԸ

Մեր ընթերցողներն անտարակոյս լսած են Բուսիոյ վերջին կայսեր Աղեքսանդր Բ. ի սպանումը: Աղեքսանդր որդի էր Նիկողայոսի Բ. ի, և երբ գահը իրիմու պատերազմին ժամանակ 1855 ին: Աղեքսանդր տղայութենէ կը սիրէր ուսում և զիտութիւն և ուսեայ մարդոց ընկերութիւնը, և ինչպէս կը տեսնուի իւր պատկերէն, էր զուարթարարոյ: Շատ ժամանակ էր որ Բուսիա կը մեծնար հարստութեամբ և զօրութեամբ, բայց ժողովրդեան հասարակ մասին դատարարութեան կողմանէ դեռ չատ ետ էր քան զաման ի գրացի սողաց: Շատ արդեւ կային կայսեր առջև որ կողէր բարեկարգութիւններ ընել, կը յաջողէր սակայն երբեմն, և արժանի է յաւերժ յիշատակի իբրև կայսր որ գահը ելլելէն վեց տարի ետքը ջնջեց բոլոր Բուսիոյ մէջ ստրկութիւնը:

Թեպէտ Աղեքսանդր այսպէս գովելի կերպով կը ջանար յօգուտ իւր ժողովրդեան, կային սակայն անոր հպատակաց մէջ ոչ սակաւ որ տրժգոն էին կառավարութեան տիրապետական գրութենէն, և կողմէն կործանել ներկայ կառավարութիւնը: Իրենք զիրենք նիհիլիտէ կոչող շատ



ԱՂԵՔՍԱՆԴՐ Բ.

տեր, ինչպէս կ'երևի, աղէկ չհաշուելով իրենց գործին հետևանքը, սկսան ջանալ սպանութեամբ վերջուներ իրենց իշխանները, կարծելով այս կերպով առնուլ ազատութիւնը որուն կը բաղձային: Կայսրը սպանելու համար անոնց շատ փորձերը չյաջողեցան, բայց վերջապէս, մինչ որ մը կայսրը կառքով կանցնէր փողոցէ մը, յաջողեցան արձակել անոր վրայ պայթող ուռմիր: Այս սոսկաւ լի գործը շարժեց բոլոր քաղաքա-

կիրթ աշխարհի զայրացումը:


Հոս քանի մը խօսք ըսենք նաև սպանեալ կայսեր որդւոյն և յաջորդին Աղեքսանդր Գ. ի վրայ: Աղեքսանդր Գ. իւր հօրը երիցազոյն որդին չէ: Երիցազոյնը, Նիկողայոս, մեռաւ 1865 ին: Անոր խօսեալը (նշանածն) էր իշխանուհին Տակմար, Տանիմարքայի թագաւորին դուստրը: Երբ Նիկողայոս մեռաւ, Աղեքսանդր եղաւ ժառանգ զուհուն, և առաւ նոյն իշխանուհին Տակմար կնութեան: Իշխանուհին է քոյր Աղեքսանդրայի, կնոջ վայելի իշխանին: Աղեքսանդր Գ. հիմա է երեսունու վեցամեայ, և ունի երեք որդի, երկու մանչ և աղջիկ մը: Կը մտքովէնք անոր երկայն կեանք որպէս զի կառավարէ այն ընդարձակ երկիրը, և ընէ բարեկարգութիւններ, մինչև իւր ժողովուրդը կրթուի և ըլլայ այնպէս ազատ և երջանիկ, ինչպէս է աշխարհի ամենէն լուսաւորեալ երկրին ժողովուրդը:

ՄԻՔՏԻ ԱՍՏՈՒԾՈՑ ՏՈՒՐ  
Կարապետ օր մը հարցոյ իւր հօրը. «Հայր, մի՞թէ ես մեղաւոր եմ?»  
«Այո» պատասխանեց հայրը:  
«Բայց հայրիկ» շարունակեց Կարապետ, «ես գողութիւն չեմ ըներ, սուտ չեմ խօսիր, երբէք մարդաստ»

պանոթիւն ըրած չեմ, կը ջանամ հնազանդ ըլլալ, դասերս սորվելու կ'աշխատիմ որչափ կրնամ, կը սիրեմ երթիմ եկեղեցի և կիրակնօրեայ դպրա-

և դպրանի խորհուրդներդ: Սուրբ գիրք կ'ըսէ. Պմէն բան բաց ու յայտնի է անոր աչքերուն առջևը, որուն պիտի տրուի մեր հաշիւը: Երբ մէ-

գողութիւն ընելու չես, այլ և ջանկանալու չես այն բանին որ ուրիշինն է: ոչ միայն մարդասպանութիւն ընելու չես, այլ և ատելու չես մէկը:



ՍԱԿՄԱՐԵՆԻ Պ. Գ. ԵՐԵՎԱՆԻ ԻՇԽԱՆԻ ԿՈՆՍՏԱՆՍՆԱԿՆԻ

Դարձեալ Աստուած սէր և հնազանդութիւն կը պահանջէ ամէն մարդէ, մեծէ և փոքրէ, և եթէ դուն այն սէրն և հնազանդութիւնը չունիս, չես տար Աստուծոյ ինչ որ իրաւունք ունի պահանջելու քէնէ, և այս է մեղանշել Աստուծոյ դէմ: Մէկու մը համար ըսել թէ մեղաւոր է, ըսել չէ թէ չար է որչափ կարելի է ըլլալ չար: Ստախոսն և մարդասպանը վատթարագոյն են քան զայն մարդ որ կը հնազանդի օրինաց. և այն տղայն որ աղտեղի և հայհոյիչ յեղու Լը գործածէ՝ վատթարագոյն է քան զայն որ սուրբ և մաքուր կը պահէ իւր բերանը: Բայց Աստուած կը նայի սրտին, և կ'ըսէ թէ չկրնար երկինք մտնել մէկը որոյ սիրտն ուղիղ և արդար չէ Աստուծոյ առջև: Կը հասկնաս, Կարապետ, ի՞նչ ըսել կ'ուզեմ:

«Այո՛, հայրիկ», պատասխանեց Կարապետ, «Կարծեմ կը հասկընամ միտքդ: Ըսել կ'ուզես թէ նայելու եմ թէ ինչպէս կ'երևիմ Աստուծոյ, և ոչ թէ քեզ կամ ընկերացոյնս»:

«Այո, սիրելի որդիս», ըսաւ հայրը, «այդ է իմ միտքս: Եւ եթէ տեսնես որ սիրտդ չէ այնպէս ինչպէս կ'ուզէ տեսնել Աստուած, Տէրօջմէն ինդրելու ես որ փոխէ զայն, և նոր սիրտս պէջ: Երբ զգաս թէ դուն չես կրնար աւելի բարի ընել զինքդ, բայց Աստուած կրնայ ընել, և երբ խնդրես որ Աստուած տիրէ քու սրտիդ, նա պիտի փո-

րոյ: Ընդէ՛ր ուրեմն, մեղաւոր եմ»: Հայրն ըսաւ, «Չաւակս, յիշելու ես թէ Աստուած կը նայի քոյն: Աստուած կրնայ տեսնել ինչ որ ընկերներդ կամ ծնողքդ չեն կրնար տեսնել: Աստուած գիտէ նպատակներդ

կու մը համար կ'ըսենք թէ մեղաւոր է, ըսել կ'ուզենք թէ Աստուծոյ առջև այնպէս է: Արդ, սիրելի զաւակրս, կը սիրեմ զԱստուած առաւել քան զամենայն. ահա այս է ինդիրը: Աստուած կ'ըսէ թէ ոչ միայն

խէ քու խիտ և չար սիրտդ որ չսիրեր զԱստուած, և պիտի ընէ զայն բարի սիրտ մը որուն մէջ կրնայ Աստուած բնակիլ»:

Սիրելի տղայք, կը յուսամ որ բարի, սիրուն և հնազանդ էք ձեր ծնու-

զաց, սակայն տեսնելու էք որ կարծա-  
էք ինդրեւ Աստուծոյ ընել ձեր  
սիրտերը յարմար Տէրոյը բնակու-  
թեան: այնպիսի սիրտեր, որ նախ  
քան դամենայն ըլլան ի սիրովառնա,  
սիրտեր, որ առաջնորդեն ձեզ շա-  
նալ ամէն օր և ամէն ժամ ընել ինչ  
որ հաճելի է Աստուծոյ:

“ՔՈՒ ԶԱՄԱՐԿ ԱՆ Է”

Գերմանիոյ մէջ քանի մը դար ա-  
ռաջ գեղեցիկ գարնանային օր մը  
հերկուած արտի մը ժամ քարի մը  
վրայ նստած էր պատանի մը որ հօտի  
մը պահպանութիւն կ'ընէր: Պատան-  
ւոյն ձեռքը կար հովուական ցուպ մը,  
և իր սիրելի շունը, Մէքս, պառկած  
էր անոր ոտքերուն քով: Տղուն ա-  
նունն էր Հէրման Պէլլինկս: Հէրման  
մինչ նստած էր տեսաւ անդիէն խումբ  
մը ասպետներ որ դէպ ի նա կու-  
գային: Ասոնք փառաւոր և շքեղ  
հագուած էին և Հէրման անոնց ե-  
րեսութէն շատ ապշեցաւ և վախցաւ:  
Մասնաւորապէս ասոնցմէ մէկը աղ-  
նուականի երեւոյթ ունէր և խումբին  
գլխաւորը ըլլալ կը թուէր: “Սյդ-  
տունը երթանք,” ըսաւ այն մարդը  
Հէրմանի հօրը խեղճուկ բնակարանը  
ցուցնելով: Սյդ, որովհետեւ տունը  
երթալու ամենակարճ ճամբան հեր-  
կուած արտին մէջէն էր, ազնուական  
հեծեալը դարձուց ձիուն գլուխը  
դէպ յայն կողմն և միւս ասպետնե-  
րը հետևեցան անոր: Բայց Հէրման  
յատկեց կայնեցաւ ասպետին առջևը,  
մինչ Մէքս, հաւատարիմ շունը, կը  
պատրաստուէր օգնելու, եթէ հարկ  
ըլլար: “Քու ճամբադ ան է,” ըսաւ  
պատանին, ձեռքի ցուպովը հասա-  
րակաց պողոտան ցուցնելով: “Պէտք  
չէ անցնիս այս հերկուած արտէն,  
դի այս արտն ուրիշի մը ստացուածն  
է և սերմանուած:” “Գուն ո՞վ ես որ  
մեզի ճամբայ կը սորվցնես և օրէնք-  
ներ կը դնես,” ըսաւ ասպետաց ա-  
ռաջնորդը:

“Ես Հէրման Պէլլինկս եմ,” պա-  
տասխանեց պատանին “և հոս կու-  
գամ հանապաղ իմ հօրս հօտը ա-  
րածելու և իր հերկուած արտը պաշտ-  
պանելու, պէտք չէ որ մէկն անցնի  
այս արտին մէջէն, մինչև անգամ  
կայսրն ալ անցնելու չէ ասկէ:”

Այն ատեն ազնուական հեծեալը  
հպարտութեամբ գլուխը վեր առաւ  
և տղուն վրայ խոժոռ ակնարկ մը  
նետելով ըսաւ: “Թանգուզն պատա-  
նի, քեզի հետ խօսողը բուն իսկ  
կայսրն է, ճամբայ տուր անոր:”

“Պատճառ ունիմ հաւատարու,”  
կրկնեց պատանին, “թէ դուն կայսրն  
ես, քանզի անոր կը նմանիս, բայց

նոյն ատեն կը կասկածիմ: Գուն չես  
կրնար մեր բարեպաշտ կայսրը Ոթոնն  
ըլլալ, քանզի նա հանապաղ պաշա-  
պան է օրինաց և արդարութեան:  
Կը գործադրէ զանոնք, որ չըլլայ թէ  
քեզի պէս զօրաւորը և հպարտը ա-  
նիրաւութիւն ընէ ինձի նման տկա-  
րին և աղքատին: Կայսեր իշխանու-  
թիւնը ուր որ կը հասնի հոն բարօ-  
րութիւն և արդարութիւն կը տիրէ:  
Սակայն, ինչ ալ որ ըլլայ, պէտք չէ  
որ դուք ձեր ոտից հեռքերովը ա-  
րէք իմ հօրս հերկած արտը և ա-  
պականէք զայն, քանզի մենք մեծ  
աշխատութեամբ ինձամած ու սեր-  
մանած ենք:”


Թառաջ անցան երեք ասպետք քաջ  
տղան բռնելու և կայսեր դէմ սցապէս

եղաւ նորա ամենաքաջ սպարապետը  
և ամենամտերիմ բարեկամ:

Ահա, փորրիկ եղբարք իմ, կը տես-  
նէք թէ Հէրման օրինաց և արդա-  
րութեան համար քայլութեամբ դէմ  
կեցաւ մինչև անգամ կայսեր: Բան  
մը չկորսնցուց, ոչ ալ միտս մը կրեց,  
հապա աւելի յարգուեցաւ և պատ-  
ուուեցաւ: Հէրման հօրը պատուէրին  
հաւատարիմ գտնուելու համար կայ-  
սեր դէմ կեցաւ, ուստի դուք որ-  
չափ աւելի ձեր հայրերուն հօրը Աս-  
տուծոյ պատուիրանքները լիութի կա-  
տարելու համար պարտիք հակառա-  
կել չար կրից և մեղաց:

Արմէնիա Գոյէճ

Ա. Գ. ԱՍՏԻԿԵԱՆ



ժպրհութեամբ խօսելուն համար պատ-  
ժելու, բայց կայսրը գոչեց. “Կեցե՛ք,  
տղուն մի դպչիք բնաւ:” Թետոյ լու-  
թեամբ ձիոյն գլուխը դարձուց հեր-  
կուած արտէն: մտաւ հասարակաց  
պողոտան և մնացեալները հետևեցան  
անոր և սցապէս հասան Հէրմանի ծնո-  
ղաց սնակը: Երբ Հէրման քիչ մը  
ետքը պատճառով մը տուն եկաւ,  
զանոնք հոն գտաւ: Բարի կայսրը տղան  
դրան քով կայնած տեսնելով անոր  
ձեռքէն բռնեց և ըսաւ հօրը.  
“Այս պատանին ինձի զրկէ: Ես  
այս Սարսոն ձիւղը դահիս մօտ  
պիտի տնկեմ, այնպէս որ քիչ ասե-  
նէն աճի և ըլլայ ազնիւ ծառայ մը.  
Գի այս պատանւոյն վերայ ճամբիտ  
մարդկութիւն կը տեսնեմ:” Այսպէս  
գնաց Հէրման կայսեր հետ և ետքն

ՎԱՂԵՄԻ ՏՈՒՆԿԵՐ ԵՒ ԾԱՌՈՒՐ

Գրեթէ ամէն երկրի մէջ կը գըտ-  
նուի երկրին տակը մեծ քանակու-  
թեամբ հանքեր: Այս ածուխն  
ընդհանրապէս խաւ խաւ է, և խա-  
ւերէն ոմանք քանի մը մատ միայն  
թանձր են, այլք քսան և աւելի  
ոտք: Գարձեալ ոմանք շատ մօտ են  
երկրիս երեսին, և ոմանք հարեւրա-  
ւոր ոտք երկրիս երեսէն վար: Զար-  
դիս ածխոյ այս հանքերը կու տան  
առատ վառելիի նիւթ շոգեհաւաց և  
ուրիշ ամէն տեսակ շոգեշարժ մեքե-  
նաներու, և այսպէս շատ մեծ է ա-  
նոնց օգուտն աշխարհի: Այլևայլ եր-  
կիրներու մէջ ածխոյ հանքերը տար-  
բեր տեսակ են: Ոմանք կակուղ են,  
կրնան կտրուիլ դանակով և կը վա-

ուրիշ շատ ծուխ և բոց տալով. ուրիշ տեսակները կարծր են և քիչ բուցով կը վառվեն :

Արդ, ուստի է այս ածուխը : Այս ածուխին սկիզբը անկային է, այսինքն՝ ամեն հանքային ածուխի սկզբան բուրր աշխարհի վրայ էր ծառ կամ տունկե թույն անկէ մանուսանդ, յայտնի է, որ այն ծառերուն և տունկերուն ճիւղերը և տերեւները կը նշմարուին տափաւին այն հանքերուն մէջ, ճիշդ ինչպէս որ ոսկերք և ուրիշ մասունք անասնոց կը նշմարուին շատ անգամ կահուղ քարերու խաւերուն մէջ : Թէ ինչպէս այն տունկերն փոխուելով եղան ածուխ, շատ յայտնի չէ, բայց հաւանականապէս շերտութեան և խաւերուն վրայ ճնշման տղզեցութեամբ այնպէս ածխացած են :


Անգղիոյ և Ամերիկայի մէջ ամէկոյ ընդարձակ հանքեր կը գտնուին : Ամերիկա և ուրիշ երկիրներ, ուր որ հանքային ածուխ կայ՝ կը գտնուի նաև մեծ քանակութեամբ բէզրոյ կոչուած տեսակ մը իւր որ ամէկոյ հանքերուն մէջ կը գոյանայ և կը վառուի իբրև կազ :

Այն ընդարձակ հանքերը կազմող ծառք և տունկը կային հազարաւոր տարիներ առաջ, մինչդեռ մարդ չկար երկրիս վրայ, և մինչ մթնոորտան այնպէս էր որ մարդուն չնշառութեան կրնար շատ փաստակար ըլլալ : Ատոուած այնպիսի հին ժամանակներ համբաւը երկրիս ծոցը վառելի նիւթոց այսպիսի առատ մթերք մեր այժմու պիտոյից համար : Մեր պատկերը կըրնայ գաղափար մը տալ այն հինաւուրց ծառոց և տնկոց ձևին և երևութիւն վրայ :

Փ Ի Ղ

Փիղն, ինչպէս ծանօթ է բազմաց, ցամաքային կենդանեաց մեծագոյնն և ամենագորեղն է : Կը գտնուի Ասիոյ հարաւային կողմերն, այսինքն՝ Հինդկաստան, Պիրմա, Սիամ և Անամ և Հնդկաց Արշիպելագոսի մեծ կղզիներն, նաև Ափրիկէի շատ կողմերը : Փիղը գլխաւորապէս երկու տեսակ է, մին Ափրիկեան և միւսն՝ Ասիական : Ասիականն քան զԱփրիկեանն մեծ, զօրաւոր և զիւրակիրթ է : Ուրիշ մէկ տարբերութիւնն ալ սա է որ Ասիականին գոյնն աւելի մութ թուի է քան միւսինն, և ականջներն աւելի փոքր են, նաև էգն երկայն ակուայ չունի, իսկ միւսինն ունի : Մինչև ցարդ կարելի եղած չէ Ափրիկեան փիղն ընտանեցունել : Փիղը կը գտնուին ընդհանրապէս երամակով, 30—100 հատ մէկտեղ : Զամբողջներ Ափրիկէի մէջ

իրը հազար փիղ մէկտեղ տեսած են : Փիղն 7—10 ոտք բարձր, 10—13 ոտք երկայն և 2,000—2,500 քաշ ծանր կ'ըլլայ : Վիզն շատ կարճ ըլլալով չկրնար գլուխն գետին ծռել, բայց այս պակասութիւնն լեցունելու համար Ատոուած տուած է անոր 6—8 ոտք երկայն կնճիթ մի, որ 40,000 է աւելի մասններէ բաղկացեալ է, և իբր 28 քաշ ջուր կրնայ պարունակել, և ունի ծայրը մասնանման գործի մը : Այս կնճիթով փիղն իւր ուտելու խոտն կը քաղէ և բերանը կը տանի, ջուր կը լեցունէ բերանն, ասով փողի ձայնի նման ձայն մի կը հանէ, նաև այս կրնէ ճիթն է փղին հոտառութեան գործարանն : Իջարի մատովն կրնայ փակ փուկ գործեր տեսնել, կրնայ գուռ մի բանալ կամ գոչել, նաև կրնայ մանր փող մի գետնէն վերցունել : Ականջներն մինչև 3 1/2 ոտք երկայն և 2 1/2 ոտք լայն են : Մինչ կը վազէ, կը բանայ ականջներն և թևերն և ահա-



գին թռչնոյ մի պէս կ'երևայ հեռու յէն տեսնողին :

Արու փիղն ունի երկու ահապին ակուայ որոց մէն մին ընդհանրապէս 6—8 ոտք երկայն և 20—40 քաշ ծանր կ'ըլլայ, բայց գտնուած է նաև 10 1/2 ոտք երկայն և 62 քաշ ծանր ակուայ մի : Ափրիկէի էգ փիղերուն ակուան կ'ըլլայ միայն մէկ երկու ոտք երկայն և 5—10 քաշ ծանր : Այս ակուաներով փիղն ծառերն արմատեն խլելով նոցա արմատոց բարակ ճիւղերը կ'ուտէ : Ակուաներն են նաև փղին գլխաւոր գէնքն, և փիղը թէ ակուաներն և թէ իւր ահապին մարմինն կը գործածէ թշնամիներէն ռի առնելու : Շատ վտանգաւոր է բարկացունել զփիղ, քանզի ամենարագ ձին անգամ դըժուարաւ կրնայ փախելով ազատիլ անոր ձեռքէն : Իսկ եթէ չզրոգուուի, բնաւ փաս չտալէ զատ՝ շատ ալ կը վախնայ ՚ի մարդոյ :

Մարդիկ փիղ կ'որսան ակուաներուն համար որոցմէ կու գայ փղուկը կուռուած նիւթն զոր կը գործածեն սանար,

ուրունք, գանակի կ'իթ և ուրիշ այլև այլ բաներ շինելու : Կ'ըսուի թէ տարին Անգղիոյ Շէֆֆիլտ քաղաքն 43,000 հատ փղի ակուայ կը բերուի իբր 30,000 լիրա ծախիւք, և այս ակուաները բանելու համար 300 հոգի կ'աշխատին : Բոլոր Անգղիա ամ բոս ամէ 400—450 հազար քաշ փղուկը կը մուծուի որ կը վաճառուի 40 քաշն 28—32 լիրայի : Կը հաշուուի որ բոլոր աշխարհիս մէջ, տարին իբր 400,000 փիղ կը սպաննուի վասն փղուկի, (մեծաւ մասամբ Ափրիկէի մէջ) : Արդ, փիղն միայն երեք կամ չորս տարին անգամ մի ձագ կ'ունենայ, և այսպէս անշուշտ շատ քիչ կը բազմանայ, ուստի շատ վախկալ որ եթէ որսն այս օրինակ շարունակուի, քիչ ժամանակի մէջ պիտի գայ այն օրն ուր այս աշխիւ և ահաւոր կենդանին բոլորովին ջնջուած պիտի լինի աշխարհէս :

Յ. Յ. ՄԱՆԻՍԱՆՆԱՆ

Այնիմայ

ՄԵԿՉՄԷԿ ՍԻՐԵՅԷՔ

Երեք կամ չորս տարեկան փոքր ազնիկ մը Սուրբ գրոց «Մէկզմէկ սիրեցէք» խօսքն ի բերան սորված էր : Անկէ քիչ մը աւելի տարեւոր քոյրն իբր թէ տարակուսելով հարցուց աւոր. «Ի՞նչ ըսել է մէկզմէկ սիրել» : Փոքր աղջիկը պատասխանեց այսպէս. «Միթէ չես չգիտեր ի՞նչ ըսել է. ես սիրելու եմ զքեզ, և դու սիրելու ես զիս : Ես եմ Գն, դուն ես միւս Գն» : Ռ՛վ կրնայ ասկէ աղէկ բացատրել այս խօսքին իմաստը :

ԱՒԵՏԱԲԵՐՆԵՐՈՒ ԳԻՆՆԵՐԸ

ԱՄՄԱԿԱՆ (Հոյերէն, Հյ. Յ. Էրւ՝ Տոճիւրէն և Պոլլաւերէն), փոսթայի ծախքով, տարին 1/4 մէճիտիէ :

ՇԱՐԱԹԱԿԱՆ (Հոյերէն, Հյ. և Յ. Էրւ՝ Տոճիւր.) փոսթայի ծախքով, տարին 4 1/2 արծաթ մէճիտ : 10 առ 100 զեղչ կ'ըլլայ անոնց որ 100 դահեկանի կամ աւելի լրագիր կ'ապսպրեն, եթէ լրագիրք մէկ անձի ուղղուին :

Ամերիկայի Մետրոպոլիտան ընկերութեան կողմէ  
Խմբագիր Զ. Ք. ԿՐԻՆ  
Յիմանճըրտ եօգուշու, Ամերիկան իան

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ե. ՅԱԿՈՒ ԳՕՅԱՆՆԱՆ